2126.713357

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0054-21

Ձեռնարկողը՝ ***«Ցեոլիտ Տեխնոլոջի» ՍՊԸ***
ք. Երևան Հաղթանակ թաղ. 1-ին փ. 70 տարածք

Գործունեությունը՝ ***Նոյեմբերյանի ցեոլիտային տուֆերի հանքավայրի «Նոր Կողբ» տեղամասի հարավ-արևելյան թևի հարակից տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0054-21

<17> 03 2021թ.

Տավուշի մարզի Նոյեմբերյանի ցեոլիտային տուֆերի հանքավայրի «Նոր Կողբ» տեղամասի հարավ- արևելյան թևի հարակից տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ցեոլիտ Տեխնոլոջի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա	/Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Կողբ համայնք

Ներածական մաս. Հայցվող տեղամասը գտնվում է Տավուշի մարզի Կողբ համայնքի վարչական տարածքում, կողբ գյուղից մոտ 8.4կմ դեպի հյուսիս-արևելք: Մոտակա բնակավայրերն են Բերդավան (6.4կմ), Զորական (6.2կմ): Ուսումնասիրվող տարածքը բնակավայրերի հետ կապված է գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:

Ուսումնասիրվող տեղամասի հողերը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր են:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ցեոլիտ Տեխնոլոջի» ՍՊ Ընկերությունը նախատեսում է ուսումնասիրել Տավուշի մարզի Նոյեմբերյանի ցեոլիտային տուֆերի հանքավայրի «Նոր Կողբ» տեղամասի հարավ - արևելյան թևի ցեոլիտակիր ապարների քանակական և որակական հատկությունները, հետագայում դրանք շահագործելու նպատակով:

ՀՀ ԲՆՕՐՀԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
РА ЕРЕВАН ГНО * ՀՀ ԵՐԵՎԱՆ ՊՈԱԿ * RA YEREVAN SNCO
ՀՀ ԲՆՕՐՀԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հայցվող տեղամասը զբաղեցնում է 31.7 հա մակերես և սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝ ARMWGS 84 (ARMREF 02) համակարով):

1.	X = 4569522	Y=8498505
2.	X = 4569653	Y=8498423
3.	X= 4569975	Y=8498667
4.	X= 4570178	Y= 8499104
5.	X= 4570084	Y= 8499228
6.	X= 4570175	Y=8499348
7.	X= 4570297	Y= 8499393
8.	X= 4570309	Y=8499516
9.	X= 4570249	Y=8499561
10.	X=4569946,	Y=8499357
11.	X=4569865	Y=8499071
12.	X= 4569608	Y=8498779

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնվել օգտակար հանածոյի մարմնի ձևաբանությունը, տեղադիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը, ինչպես նաև նախկինում հանքավայրի տարածքում իրականացված հետախուզական աշխատանքների փորձը:

Հորատման աշխատանքներն կիրականացվեն սյունակային թեք հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի 132 և 112 մմ տրամագծերով կարծր համաձուլվածքի թագիկներով, URB 2.5A (Zil-131) տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 10 տեղակայում և տեղահանում:

Հորատանցքերը հորատվելու են 200մ խտությամբ հետախուզական ցանցով, թեք՝ այնպես, որ հորատանցքերն ու հանքային մարմինները միմյանց հատվեն որքան հնարավոր է ուղղահայաց:

Նախատեսվում է հորատել 10 հորատանցք 60մ միջին խորությամբ: Հորատանցքերի ընդհանուր ծավալը կկազմի մոտ 600գծ.մ:

Հորատվող ապարներն ըստ հորատելիության աստիճանի համապատասխանում են հետևյալ կարգերին.

- ժամանակակից էլյուվիալ-դելյուվիալ առաջացումներ՝ – IV կարգ,
- ուժեղ ճեղքավորված, մասամբ հողմահարված ցեոլիտակիր տուֆեր – VI կարգ,
- թարմ, թույլ ճեղքավոր ցեոլիտակիր տուֆեր – VII կարգ,

Մակերեսում հանքային մարմինները նախատեսվում են ուսումնասիրել հետախուզական առուներով և մաքրվածքներով:

Առուների խորությունը պայմանավորված է հանքային մարմինները ծածկող հողի կամ նստվածքի շերտի հզորությամբ: Հետախուզական առուների խորությունները միջինը հաշվվում է 0.5մ, իսկ լայնությունը՝ 0.8մ է:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * РА ЕРЕВАН, ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ" ГНО * РА ЕРЕВАН, ул. Арташесян 77

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Նախատեսվում է անցնել վեց մագիստրալ հետախուզական առու մոտ 1300գծ.մ ընդհանուր երկարությամբ, որոնց ծավալը կազմելու է մոտ 520մ^3:

Ջերմոցներում, անասնապահական ֆերմաներում, թռչնաբուծարաններում և փորձարարական լաբորատորիաներում փորձարկումներ անելու նպատակով նախատեսվում է արդյունահանել մոտ 100տ ցեոլիտային տուֆ: Նշված քանակով ցեոլիտային տուֆ արդյունահանելիս անհրաժեշտ է իրականացնել մոտ 100մ^3 մակաբացում: Մակաբացման գործակիցը ընդունվում է՝ 1մ^3/տ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները կատարվելու են 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատհանուկի փաստագրում – 600գծ.մ,
- հետախուզական առուների և մաքրվածքների փաստագրում – 1300գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում – 10գծ.մ

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, հետախուզական առուներից, մաքրվածքներից և փորձնական բացահանքից:

Հայցվող տեղամասի հարևանությամբ գտնվող «Նոր կողբ» տեղամասում առանձնացվում են 4 ցեոլիտակիր շերտեր, որոնց ընդհանուր հաստությունը գնահատված է 30մ:

Հորատահանուկի նմուշարկումը իրականացվելու է հատված հանքային մարմնի անընդհատ տիրույթներով: Սեկցիայի երկարությունը սահմանել 5մ, որը կարող է նվազեցվել մինչև 3մ հանքային մարմնի տեղադիրքից ու կառուցվածքից կախված: Ընդհանուր առմամբ նախատեսվում է հորատանցքերից վերցնել 40 հանուկային նմուշ:

Փորձնական հանույթի բացահանքից նախատեսվում է վերցնել 1 համախառն նմուշ 100տ քաշով, փորձարկումներ իրականացնելու համար:

Ապարների քիմիական կազմը և պետրոգրաֆիան որոշելու համար նախատեսվում է վերցնել 10 կետային նմուշ տարբեր խորություններից:

Այսպիսով հետախուզվող տեղամասից հորատանցքերից, հետախուզական առուներից ու փորձնական բացահանքից նախատեսվում է վերցնել 91 ակոսային, կետային և համախառն նմուշ:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի, «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիաներում, ջերմոցային տնտեսություններում, անասնապահական և թռչնաբուծական տնտեսություններում:

Տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների վերհանման ինչպես նաև հարևան տարածքների գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու նպատակով նախատեսվում է հետախուզական փորվածքների անցման ընթացքում իրականացնել դիտարկումներ և տեղազննում:

Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ռադիոակտիվ տարրերի զանգվածային որոնումներ:

Օգտակար հանածոյի ճառագայթահիգիենիկ հատկությունների գնահատման համար նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել ապարների ռադիոմետրական չափումներ:

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՇՐՋԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՍԱԼՏԻՆԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
РА ЕРЕВАН «ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ» ГНО
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար 15-20 օրը մեկ նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի СП-68-02 էտալոնացում և զգայունության ստուգում:

Երկրաբանական հետախուզական աշխատանքների համար կառուցվելու է մոտ 1600գծ.մ (4800մ^2) մոտեցման ճանապարհ և 10 հորատման հարթակ 400մ^2 ընդհանուր մակերեսով: Հողային աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի 4040մ^3:

Աշխատանքներն իրականացվելու են CAT D6H մակնիշի բուլդոզերով, պայմանագրային հիմունքներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ տեղամասում ստորերկրյա ջրերը բացակայում են, իսկ հետախուզական աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Այսպիսով ճանապարհների, հորատման հարթակների, հետախուզական առուների և փորձնական բացահանքի անցման ժամանակ խախտվելու է 6291մ^2 մակերես, որտեղից հանվելու է մոտ 4720մ^3 լեռնային զանգված, որից մոտ 600մ^3-ը հողաբուսական շերտի ծավալն է:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների, հետախուզական առուների և փորձնական բացահանքի մակերեսի չափով, քանի որ ճանապարհները հետագայում օգտագործվելու են:

Սկզբում փորվածքի մակերեսին լցվում և հարթեցվում են էլյուվիալ-դելյուվիալ առաջացումները, որից հետո դրանք ծածկվում են մոտ 0.2մ հաստությամբ հողաբուսական շերտով: Հողի շերտի փռումը կատարվելու է ձեռքով, իսկ էլյուվիալ-դելյուվիալ առաջացումները՝ տեխնիկական միջոցներով:

Հողի շերտի վերականգնումից հետո նախատեսվում է իրականացնել նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:

Վերականգնման ենթական ռելիեֆի մակերեսը կկազմի 1491մ^2 իսկ պահանջվող լեռնային զանգվածի ծավալը կլինի 875մ^3:

Ռելիեֆի վերականգնման՝ ռեկուլտիվացիայի գումարը կկազմի՝ 875մ^3 x 1500 դրամ = 1312.5 հազ. դրամ:

Անմիջապես երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել, բնության հատուկ պահպանվող տարածքը «Զիկատար» պետական արգելավայրն է, որը գտնվում է հանքավայրից 11կմ հեռավորության վրա, ամենամոտ բնության հուշարձանը «Փայտասար» քարանձավների համալիրն է, որը գտնվում է Կողբ գյուղից 4 կմ դեպի հարավ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- տարածքում աշխատող տեխնիկան լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում, բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" STATE NON-PROFIT ORGANIZATION
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպել տեխ. սպասարկման կայաններում:
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
- տարածքում աշխատող տեխնիկան պարտադիր պետքե է լինեն սարքին վիճակում և ունենան արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ և ձայնախլացուցիչ սարքեր,
- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախի մուտքային ավտոճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Ջուրը նախատեսվում է բերել համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն՝ կողբ գյուղի ջրամատակարարման ցանցերից,
- կեղտաջրերի հավաքում սեպտիկ հորում, որը դատարկում է հատուկ ծառայության ուժերով,
- անվտանգության նկատառումներից ելնելով նախատեսվում է աշխատանքների իրականացման տարածքների մեկուսացում/ցանկապատում/,
-կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
-աշխատանքների ավարտից հետո կկատարվի խախտված տարածքների ռեկուլտիվացիա,

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Ցեոլիտ Տեխնոլոջի» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Բնապահպանական միջոցառումների (մշտադիտարկումների) համար նախատեսվում է տարեկան մասնահանել առնվազն 100.0 հազ.դրամ:

Պատճառաբանական մաս. Տավուշի մարզի Կողբ համայնքում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները ինչպես նաև Տավուշի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՊԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ • ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE COMMISSION OF EXPERTS 02543163

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:
- Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ցեոլիտ Տեխնոլոջի» ՍՊԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի Նոյեմբերյանի ցեոլիտային տուֆերի հանքավայրի «Նոր Կողբ» տեղամասի հարավ- արևելյան թևի հարակից տեղամասում 2021-2023թ.թ. իրականացվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան